


9792

283

U-66

1944



HA PM.
4-1342

5263

4-1342

„ԲԱՐԻ ԼՈՒՐԻ“ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

№ 20.

283

5-66


Մ Է Ր Ի Զ Օ Ն Ս Ի

ՊԵՏՄՈՒԹԻՒՆԸ

Նա կշտացնում է կարտած անձին,
և լցնում է սոված անձը բարութիւնով:
Սաղմու ձէ, 9:

Դո խօսքն ապրիցնում է ինձ:
Սաղմու ձժԹ, 50:

ИСТОРИЯ
Мери Джонса.



Б А К У
Тип. А. Н. Тараева и И. О. Степанянца.
1914.

12/487

2356

ՄԷՐԻ ԶՕՆՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նա կշտացնում է կարօտած անձին,
և լցնում է սոված անձը բարութիւնով:
Սաղմոս ՃԷ, 9:

Քո խօսքն ապրեցնում է ինձ:
Սաղմոս ՃԺԹ, 50:

Բրիտանական Աստուածաշունչի ընկերութիւնը 1904-ին տօնեց իր հիմնադրութեան 100-ամեայ յօբելեանը: Աստուած իր շնորհքով այդ ընկերութիւնից գետեր է բղխեցրել բոլոր երկրի վրա: 1804-ից ի վեր ընկերութիւնը բոլոր Աստուածաշունչը կամ սրա առանձին մասերը աւելի քան 400 այլ և այլ լեզուներով հրատարակել է և սրանցից 200 միլիօն հատոր բոլոր աշխարհի մէջ տարածել:

Մարգս մտածելով «անցեալ օրերի» վրա, երբ ներկայումս այդ վիթխարի ծառը իբր մանանեխի հատիկ տնկուեցաւ, առանձնապէս պէտք է յիշի Մէրի Զօնսին՝ Ուէլսի մի հասարակ գիւղացի աղջկան: Ս. Գիրքը անհամեմատ եռանդով կարգացող այդ

աղջիկը, որն իր անխոնջ ջանքերով կարողացաւ ձեռ բերել մի սեփական Աստուածաշունչ, պատճառ եղաւ Բրիտանական Աստուածաշունչի ընկերութեան հիմնվելուն: Այդ աղջկայ պատմութիւնն ենք տալիս այստեղ մեր ընթերցողներին:

Սա թող պատմի մեզ Աստուծոյ փառաւոր գործերից, որ ճաշխարհքին անտոհմներին և անարգութեաներին ընտրեց, և ոչինչներին... որպէս զի ոչ մի մարմին չպարծենայ Նրա առաջին» (Ա. Կոր. Ա, 28. 29), այլ «նա որ պարծենում է՝ Տէրովը պարծենայ» (Ա. Կոր. Ա, 31):

Մէրի Զօնսը մէկ ազնիւ կտաւագործի միակ որդին էր: Սրանց

ցած խրճիթը գտնվում էր Ուէլսի Լանգֆիհանգլ կոչված գիւղում: Յակոբ Ջոնսը և իր կինը պարզ և հաւատարիմ քրիստոնեաներ էին: Մէրին շատ կանուխ, մօր գրկում հստած՝ լսել էր մեծ հետաքրքրութեամբ նրա պատմած Սատուածաշունչի պատմութիւնները: Եւ դեռ շատ փոքրիկ ժամանակը ծնողների հետ միասին գնում էր եկեղեցի, ներկայ էր լինում ժողովներին և լսում Ս. Գրքի ընթերցանութիւնը և մեկնութիւնը: Այն ժամանակ Սատուածաշունչը չէր գտնվում Ուէլսի ամեն տներում: Հազիւ թէ ունեւոր մարդիկը կարողանում էին մէկը ձեռք բերել, որովհետեւ շատ քիչ Սատուածաշունչ կար Ուէլսի լեզուով:

Սրտաշարժ էր տեսնել թէ ինչ մեծ եռանդով փոքրիկ Մէրին օգտվում էր պատեհութիւնից՝ Սատուածաշունչից աւելի բան սովորելու համար:

«Մայրիկ, ի՞նչու մենք մեր տանը չունենք Սատուածաշունչ», հարցրեց նա մի գիշեր ժողովից տուն վերադառնալիս:

«Որովհետեւ Սատուածաշունչները շատ հազազիւտ են, որդիս, և որովհետեւ մենք կարողութիւն չունենք մէկը առնելու: Կտաւագործի արհեստը ազնիւ արհեստ է, բայց սրանով կարելի չէ հարստանալ: Մենք շատ բաղդաւոր ենք, որ կարող ենք մեր օրական

ընկալել հայթայթել: Ճիշդ է, որդիս, լաւ բան է Սատուածաշունչ ունենալը, բայց աւելի լաւ է մեր գիտեցած Սատուածաշունչի խօսքերը անելը: Եթէ մենք սրանում հաւատարիմ լինենք, Վարդապետը կը հոգայ, որ մենք աւելի իմանանք Նրա կամքը. պէտք է համբերութեամբ սպասենք»:

«Մայրիկ, դու այնքան սպասել ես, որ արդէն սովորել ես, բայց ինձ համար դժուար է: Ամեն անգամ որ լսում եմ՝ Սատուածաշունչի մի մասի ընթերցանութիւնը, փափագում եմ աւելի բան իմանալ»:

Այս ութ տարեկան աղջկայ ամենամեծ փափագն էր կարգաւ սովորելը և Սատուածաշունչ ունենալը: Բայց այս փափագի կատարումը անկարելի էր երևում: Ուսումնարան չկար այն հեռավոր տեղում, և Մէրիի ծնողները չբաւոր լինելով միջոց չունէին աղջկան ուսումի տալու: Հայրը և մայրը իրանց արհեստով էին պարապում և տան գործերի մեծ մասը ընկած էր փոքրիկ աղջկան վրա: Նրա հասակի ուրիշ երեխաները սովորում էին իրանց դասերը, խաղում էին տիկիներով կամ պատկերազարդ գրքերով, իսկ նա պիտի մաքրէր, աւելէր, սրէր և փորէր, և երբեմն էլ հիւսէր: Մէրին էր նոյնպէս կեցակրում հաւերին և ժողովում նա էր հոգում մեղունե-

րին: Եւ երբ անհրաժեշտ գործերը կատարում էր՝ նստում էր ձմեռը աթոռի վրա օջախի մօտ կամ ամառը տան դռանը և զբաղվում էր հագուստ կարելով, կարկտելով, միևնոյն ժամանակ էլ նա երգում էր Ուէլսի մին հին եղանակ կամ կրկնում էր իր սիրած Ս. Գրքի համարները, որոնք տպաւորվել էին նրա մանկական սուր յիշողութիւնում:

Երկու տարի անցել էր՝ առանց երեխայի փափագը կատարվելու ամենափոքր յոյսի, երբ մի գիշեր Յակոբ Ջոնսը վերադարձաւ երեք քառորդ ժամ իրանց բնակարանից հեռու գտնվող Արդի-նօլին գիւղից, ուր նա գնացել էր՝ իր և իր կնոջ վերջի ամիսները պատրաստած կտաւը վաճառելու: Համարեայ թէ ամբողջ օրը նա պատել էր, բայց կարծես թէ յուսած չլինէր: Ուրախութիւնից աչքերը փայլում էին: Ժպիտը շրթունքների վրա նա ներս մտաւ և գնաց իր սովորական տեղը օջախի մօտ:

Մէրին որ իր քննող նայուածքով նկատում էր հօր դէմքի ամենափոքր շարժումներն անգամ, վազեց նրա մօտ և հետքերի նայեց նրան:

«Հայրիկ, ի՞նչ կայ», հարցրեց նա և կարծես թէ իր գեղեցիկ և խոր աչքերով կամենում էր հօր աչքերից հասկանալ նրանում եղածը: «Անշուշտ բարի է լինում

ունիս մեզ հաղորդելու»:

«Տեսէ՛ք այդ փոքրիկ տեսանողին», ասաց հայրը մեղմ ձայնով և քաշեց աղջկան և նստեցրեց իր գրկում, «նա այնքան խելօք է որ գուշակում է թէ հայրը ինչ ունի ասելու»:

«Ինձ վերաբերող բան է», հարցրեց Մէրին և սկսեց հօր երեսը շոյել:

«Այո, աղջիկս, քեզ է վերաբերում, և միևնոյն ժամանակ քո մօրդ և ինձ»:

«Ի՞նչ կարող է լինել այս», հարցրեց նա ցած ձայնով:

«Ի՞նչ բան է», հարցրեց տիկին Ջոնսը:

«Ի՞նչ կասես, կին, եթէ մեր աղջիկը ուսումնական դառնայ, գիտենայ կարգաւ, գրել և հաշվել, և էլ շատ ուրիշ բաներ, որ իր ծնողները երբեք չեն իմացել»:

«Օհ, հայրիկ»:

Եւ փոքրիկ Մէրին, որ յուզմունքից սահել էր հօր գրկից գետնի վրա, հիմա կանգնել էր հօր առաջին՝ լուռ, դողալով և ձեռքերը իրարու միացրած: Նրա հայրը մի քիչ ժամանակ առանց խօսելու նրան նայեց և յետոյ ասաց. «Այո, սիրելիս, ուսումնարան է բացվելու Արդինօլինում, ուսուցիչը արդէն նշանակվել է և իմ փոքրիկ Մէրին, որ երկու միջոց ճանապարհ ոտքով գնալուց չի վախենում, կը գնայ ուսումնարան և կը սովորի որքան շատ



39695-63

բան որ կարելի է» — «Օհ, հայրիկ»:

«Ախ, մինչև երբ լսենք «Օհ, հայրիկ» կանչելը», ասաց նա ծիծաղելով: «Կարծում եմ դու հիմա գոհ կը լինես, թէ գուցէ սխալվում եմ: Ի՞նչ կասես»:

«Թէ արդեօք ես գոհ եմ, այո, հայրիկ, շատ գոհ եմ, որովհետև վերջապէս կը սովորեմ կարդալ Աստուածաշունչը»:

«Բայց», կմկմաց նա, «արդեօք յօժար կլինի մայրիկը կատարելու տան գործերը, որոնք ես հիմա կատարում եմ»:

«Յօժար», ասաց տիկին Ջօնսը: «Այո, որդիս, ես կանեմ: Թէև նեղութիւն կլինի ինձ մենակ առանց քեզ, քանի որ դու իմ աջ ձեռքս ես, կատարել տան գործերը, բայց, աղջիկս, քո բարեխառութեան համար աւելի մեծ գործեր պատրաստ եմ ինձ վրա առնելու»:

«Սիրելի բարի մայրս», բացականչեց Մէրին և տարածելով ձեռքերը մօր պարանոցով, սկսեց համբուրել նրան: «Բայց ես չեմ կամենում, որ դու շատ գործես և շատ յոգնես: Ես կը զարթնեմ առաւօտեան մէկ երկու ժամ կանուխ և մինչև ուսումնարան գնալս, ինչ որ կարող եմ, ամեն ինչ կ'անեմ քեզ համար»:

Երեխան ցնծալով ուրախ սրբապետով դարձեալ գնաց իր գործին:

Երեք շաբաթից յետոյ բացվեց ուսումնարանը: Աղջիկը չափա-

զանց ուրախացաւ, որովհետև նա սովորելու մեծ փափագ ունէր: Ինչ որ ուրիշներին ձանձրութիւն էր պատճառում նոյնը գուարճութիւն էր նրա համար: Նա այնքան ոգևորված էր ուսմանում, որ միշտ առաջինն էր լինում իր կարգի մէջ և շատ կարճ միջոցում սովորեց արդէն կարդալ և գրելը:

Նրա միտքը միշտ աւելի կըրթվում և զարգանում էր, բայց սիրտն ու կեանքն էլ ետ չէր մնում: Մայրն էլ շատ գոհ էր, տեսնելով որ աղջիկը կատարում էր նոյնպէս իր տնային պարտականութիւնները: Երեխան զարթնում էր շատ կանուխ, մինչև առաւօտը վերջացնում էր իր տնային գործերը և երբ ուսումնարանից վերադառնում էր, այն ժամանակ էլ օգնում էր մօրը և միևնոյն ժամանակ պատրաստում էր իր հետեւեալ օրվայ դասերը:

Ուսումնարանում բոլորը սիրում էին նրան, որովհետև նրա բնավորութիւնը շատ լաւ էր, նա ժիր և եռանդուն էր և պատրաստ էր ամեն հանգամանքում ուրիշներին ծառայելու: Ոչ մէկն էլ իր ուսումնարանի ընկերուհիներից նախանձ չուներ դէպի նրան:

Շուտով բացվեց նոյնպէս կիրակնօրեայ ուսումնարան: Հէնց առաջին օրից Մէրին այնտեղ էլ իր տեղը բռնեց. նրա կենդանի աչքերը և ուշադիր դէմքը ցոյց

էին առաւել, որ նա շատ հետաքրքրվում էր դասերով և սովորելու մեծ փափագ ունէր:

Մի գիշեր ժողովից յետոյ Արրգինովինի մի կալուածատիրոջ կինը տիկին էվանսը, որը լաւ բարեկամ էր Ջօնսի ընտանիքին, կամենում էր գնալ տուն, երբ յանկարծ զգաց, որ մի ձեռք դըրվեցաւ իր ուսի վրա և մի լաւ ծանօթ ձայն ասաց նրան. «Ներեցէք, տիկին էվանս, թոյլ կտամ ձեզ մի բան հարցնել»:

«Իհարկէ, աղջիկս, ի՞նչ բանի մասին է խնդիրը»:

«Յիշում էք դեռ, տիկին էվանս, երկու տարի առաջ դուք ինձ ասացիք, որ իրաւունք կտաք գալ ձեր տուն և կարդալ ձեր Աստուածաշունչը»:

«Լաւ յիշում եմ, զաւակս, միթէ արդէն գիտես կարդալ»:

«Այո, տիկին էվանս, ես գնում եմ կիրակնօրեայ ուսումնարանը, ուր ինձ դաս են տալիս սովորելու, և եթէ իրաւունք կտաք շաբաթ մի անգամ գալ ձեր տուն, գուցէ շաբաթ օրը, որ ես ազատ եմ, ես շատ շնորհակալ կլինեմ ձեզանից»:

«Բան չկայ շնորհակալութեան, սիրելիս, եկ միայն, ես շատ ուրախ կլինեմ: Ուրեմն ես կը սպասեմ քեզ շաբաթ օրը»:

Հետեւեալ շաբաթ օրը Մէրին ուրախ սրտով ճանապարհվեց դէպի նրանց կալուածքը: Մէկ ժամ

ճանապարհ պիտի գնար՝ այնտեղ հասնելու համար, բայց նրան շատ կարճ երեւցաւ: Շատ սիրով նա ընդունվեց այնտեղ:

«Առաջ տաքացիր», ասաց նրան տիկին էվանսը, «և յետոյ գնա հիւրասենեակը և կարդա Աստուածաշունչը: Ունե՞ս թուղթ և մատիտ, որ գրես քեզ համար ինչ որ ուզես»:

«Այո, տիկին էվանս, շնորհակալ եմ», ասաց Մէրին: Մի քանի րոպէ նա հանգիստ առաւ վառ կրակի առաջ և յետոյ տարվեցաւ հիւրասենեակը, ուր տեսաւ մէկ սեղանի վրա այն թանգազին գանձը:

Յուզմունքից և ուրախութիւնից նա դողդողում էր, որովհետև առաջին անգամ էր իր կեանքում գտնվում առանձին մի սենեակում, ունենալով Աստուածաշունչը իր առաջին: Կամաց բաց արաւ նա և կարդաց Յովհաննու աւետարանի Ե. գլ. 39 համարը. «Քննեցէք զրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանք, և նորանք են որ ինձ համար վկայում են»:

«Այո», բացականչեց նա, «ես հնազանդ կլինեմ: Իմ բոլոր կարողութիւնովս կը քննեմ և կը սովորեմ: Ո՛հ թէ ունենայի սեփական մի Աստուածաշունչ»:

Նա սովորեց հետեւեալ օրվայ իր դասը, յետոյ մնաք բարեւասաց նրանց տանը, ուր այնպէս

սիրով ընդունել էին նրան և վերադարձաւ տուն. նրա սիրտը լցված էր այդ փափագով. «Ես պէտք է մի սեփական Աստուծոյն շունչ ունենամ»:

«Այո», կրկնեց նա բարձրաձայն, «պէտք է ունենամ մէկը, թէև սրա համար պէտք լինէր մինչև իսկ տասը տարի խնայողութիւն անել և մի կոպէկ միւսի ետեից ետ դնել»:

Ծնունդը վրա հասաւ և սրա հետ էլ Մէրիի և նրա ընկերուհիների արձակուրդը. բայց իսկապէս նա շատ պիտի ամսասար իր ուսումնարանի աշխատանքը ընդհատելու, եթէ գիտաւորութիւն չունենար փոքր ինչ փող շահելու՝ Աստուածաշունչ գնելու համար:

Առանց թողելու իր տան պարտականութիւնները՝ նա գտնում էր միջոց և ճանապարհ ժամանակ առ ժամանակ զբաղվելու դրացիների մօտ՝ մի քանի կօպէկներ շահելու համար: Այն չքաւոր ազգաբնակութեան շրջանում գործ էր անում միայն սև փող: Մէկ տեղ տան մայրը գրնում էր լուացք անելու, պէտք էր պահել երեխային, մի ուրիշ տեղ պէտք էր ժողովել չոր փայտեր ծմակից, կամ թէ կարկտելու հին բաներ կային մի ընտանիքի համար, որտեղ մայրը զբաղված լինելով շատ գործերով, ուրախ էր որ կարող էր այդ գործը փողով անել տալ:

Իւրաքանչիւր գրօշը, իւրաքանչիւր կոպէկը պահում էր մեծ տուփի մէջ, որ հայրն էր պատրաստել:

Այս տուփը դրված էր մի բարձր տեղ, ուր հասնում էր Մէրիի ձեռքը, և ամեն անգամ որ նա իր նեղութիւնով վախտակած սև փողերը գցում էր այնտեղ, սիրտը լցվում էր ուրախութիւնով. նա հաշվում էր թէ տակաւին որքան պէտք էր մինչև որ այդ փողերիկ դրամներից գոյանար Աստուածաշունչի համար պէտք եղած գումարը:

Այն բարի տիկին էվանսը, որը լաւ գիտէր երեխայի փափագը, կամենալով օգնել նրան՝ ընծայեց նրան մէկ գեղեցիկ աքաղաղ և երկու հաւ: Խեղճ երեխան խօսքեր չէր գտնում իր ուրախութիւնը և շնորհակալութիւնը յայտնելու համար: «Սիրելիս», ասաց նրան տիկին էվանսը, «ես կամենում եմ օգնել քեզ ձեռքերելու Աստուածաշունչը, որովհետեւ ես քեզ սիրում եմ և քեզ ուրախութիւն պատճառելը ինձ բաղձաւոր է անում: Գարնանը ձու կածեն հաւերդ և դու կը ծախես ձուերը, որ քեզ են պատկանում, և սրանով փող կաշխատես... և ես գիտեմ ինչու համար քեզ փող պէտք է», ասաց բարի կինը ժպտալով:

Մինչև որ կը սկսէին հաւերը ձու անել՝ Մէրին ուրախութիւն

ունեցաւ առաջին սպիտակ փողը գցել տուփի մէջ: Եւ մենք չենք կարող չպատմել այդ փողերիկ դէպքը:

Մի երեկոյ նա վերադառնում էր հարեան գիւղից, ուր որ հայրը գործով ուղարկել էր նրան, ճանապարհին յանկարծ նրա ոտքը դաւաւ մի քանի: Նա կռացաւ և վերցրեց մի մեծ կաշիի փողի քսակ: Մինչ նա մտածում էր թէ ումը պիտի լինէր այդ գանձը, եկաւ մէկ մարդ, որ կամաց գընալով փնտրում էր ինչ որ մէկ բան, սա տիկին էվանսի փեսան էր՝ կալուածատէր Գրեգօսը:

«Բարե, Մէրի», ասաց նա: «Շուկայից վերադառնալիս կորցրել եմ փողիս քսակը...»

«Փողի քսակը», բացականչեց աղջիկը, «ես հէնց հիմա մէկը գտայ, արդէօք սա ձերն է»:

«Այո, իհարկէ սիրելիս, և ես շատ շնորհակալ եմ քեզանից: Բայց սպասիր», աւելացրեց նա, տեսնելով որ Մէրին կամենում էր շարունակել իր ճանապարհը, «ես կը կամենայի տալ քեզ մի փողերիկ բան, որպէս վարձատրութիւն, կը կամենայի ասել, որպէս շնորհակալութիւն»:

Նա մեկնեց Մէրիին մէկ հատ 25 կոպէկանոց, Չափազանց ուրախացած վազեց նա տուն և այդ թանգագին արծաթը գցեց իր տուփի մէջ, ուր նա հաւանօրէն տարիներ պիտի մնար այն շատ

սև փողերի հետ միասին:

Անցաւ ծնունդի արձակուրդը: Մէրին դարձեալ գնաց ուսումնարան և նորից սկսեց ամեն շաբաթ օր գնալ այն կալուածքը՝ Աստուածաշունչը քննելու և կիրականօրեայ դասը պատրաստելու համար: Շաբաթներ անցան և նա չը կարողացաւ մի կոպէկ անգամ գցել իր գանձանակը:

Պատահեց մի քանի անգամ որ նա շաբաթ օրերը ուշ վերադարձաւ տուն և մայրը անհանգիստ եղաւ, որովհետեւ Մէրին սովորութիւն ունէր կարճ շաւղով գնալու, որը թէև ցերեկով շատ յարմար էր, բայց գիշերը դժուար և նոյնիսկ վտանգաւոր կարող էր լինել, մանաւանդ ձմեռ ժամանակ, երբ շատ շուտ էր գիշերանում:

Մի գիշեր Զօնսը և իր կինը նստած սպասում էին իրանց աղջկան: Հին ժամացոյցը արդէն գարկել էր ժամը ութը. երբէք երեխան այդպէս ուշ չէր վերադարձել:

«Մէրին հիմա ճանապարհումն է», ասաց մայրը երկար լռութիւնից յետոյ. «չափազանց մութ է: Նա շատ ուշացաւ, մի գուցէ նրան մի բան լինի պատահած»:

Նա վերկացաւ, բաց արաւ դուռը և սկսեց ալանջ դնել:

«Անհանգիստ մի լինիր, սիրելիս», ասաց մարդը. «մեր աղջիկը բարի գործի համար է գնացել, և Տէրը որ նրա սրտին գցել է

այդ բանը, կը պահէ նոյնպէս նրա ելքը և մուտքը»։

Նոյն վայրկենին լսվեցաւ թե՛ քայլերի ձայնը և Մէրին ներս մտաւ շատ շարժված, որովհետեւ շտապով էր անցել ճանապարհը։ Նրա աչքերը փայլում էին և նրա երեսի ուրախութիւնից շուտով ծնողների երեսների վրա էլ յայտնվեց ուրախութիւնը։

«Ի՞նչ ես սովորել այսօր, գաւաղը», հարցրեց հայրը։ «Դիտե՞ս արդէն կիրակի օրվայ դասը»։

«Այո, հայրիկ, և ի՞նչ գեղեցիկ դաս է։ Իմ դասը և տիկին էվանսը այդքան ժամանակ ուշացրին ինձ»։

«Ի՞նչպէս», հարցրեց մայրը։ «Վենք շատ անհանգիստ էինք քո այդքան շատ ուշանալուդ համար, գաւաղը»։

«Սիրելի մայրիկ, պէտք չունէիր անհանգիստ լինելու։ Աստուած գիտէր իմ արածը և Նա պահում է ինձ ամեն չարից։ Ո՛հ, հայրիկ, որքան որ կարգում եմ Աստուածաշունչը, նոյնքան աւելի ցանկանում եմ Տիրոջը լաւ ճանաչելու։ Մինչև սեփական Աստուածաշունչ չունենամ՝ ես հանգիստ չեմ ունենալու։ Բայց ստիպված լինելով սպասել սրան՝ ես հետս բերել եմ մի մեծ կտոր՝ տիկին էվանսի Աստուածաշունչից»։

«Մէրի, սա ի՞նչ ես ասում, իհարկէ դու այդպէս արած չես լինիլ», բացականչեց վախեցած

տիկին Զօնսը։

«Սիրելի մայրիկ, ես խօսում եմ այն բանից, որ բերել եմ գրութիւն և սրտիս մէջ», աւելացրեց աղջիկը ցած ձայնով։

«Եւ, խո՛ւն է այդ կտորը», հարցրեց հայրը։

«Սուրբ Մատթէոսի եօթներորդ գլուխը։ Մեր դասը մինչև 12 համարն էր, բայց այնպէս հեշտ էր և գեղեցիկ, որ այդտեղ չկարողացայ կանգ առնել, այլ սովորեցի ամբողջ գլուխը։ Ես կասեմ եթէ կամենաք»։

Հայրը թողեց իր գործը և նստեց օջախի մօտ, մայրն էլ վերցրեց գուլպան և Մէրին նըստած մի աթոռի վրա՝ ասաց ամբողջ գլուխը սկզբից մինչև վերջը, նոյնիսկ առանց փոքր ինչ կանգ առնելու, և ասաց այնպէս մի եղանակով, որից պարզ տեսնվում էր թէ մինչև որ աստիճան նա հասկանում էր և գիտատու էր իր սովորածը։

Երբ երեխան գնաց քնելու՝ Զօնսը ասաց իր կնոջը. «Կին, այս աղջիկը չի մեռնելու մինչև որ մեծ բաներ չանէ Տիրոջ համար։ Երբ նա ստում էր այն համարը (Մատթ. է, 7). «Խնդրեցէք և կը տրուի ձեզ», ես տեսայ ինչպէս նրա աչքերը փայլեցին, թուշերը կարմրեցին, և լաւ իմացայ թէ ինչ բարձր է գնահատում նա Աստուածաշունչը։ Ես համոզված եմ որ նա մեր կարծածից

շատ աղօթում է մի սեփական Աստուածաշունչ ունենալու համար, և մէկ օր կը լսուի նրա աղօթքը։ Այո, մեր գաւաղը կուսենայ իր Աստուածաշունչը»։

Մէրին իր առաջին կոպէկը գանձանակի մէջը գցելուց յետոյ անցել էին վեց տարիներ, աշխատանքի, համբերութեան և սպասման վեց երկար տարիներ, երբ մի շաբաթ իրիկուն աղջիկը վերադարձաւ կալուածքից, և անգուսպ ուրախութիւնով վստայով եկաւ իր ծնողների մօտ։

«Մայրիկ, հայրիկ», բացականչեց նա. «տիկին էվանսը վերադարձել է ինձ ինչ որ պարտ էր. սա շատ աւելի է, քան ես սպասում էի, և ես հիմա այնքան փող ունիմ, որ կարող եմ մէկ Աստուածաշունչ գնել... Ես այնքան բազում եմ, որ հազիւ թէ կարողանում եմ հաւատարմ»։

Հայրը թողեց գործը և տարածեց երկու ձեռքերը աղջկան. «Այո», ասաց նա, «օրհնեալ է Աստուած։ Նա է այդ փափազը քո սրտին գցել, Նա է քեզ և համբերութիւն ու զօրութիւն տուել, որ աշխատես և սրտիդ փափազը կատարված տեսնես։ Նա ինքը օրհնի քեզ, սիրելիս»։

Նա հանդիսաւոր կերպով դրաւ իր ձեռքը աղջկայ գլխի վրա և աւելացրեց հանգարտ ձայնով. «Եւ դու օրհնված կլինես»։

«Բայց ապա ինձ, սիրելի հայր»,

ասաց նա փոքր ինչ յետոյ, «օրտեղ կարող եմ Աստուածաշունչ գնել։ Ոչ այստեղ կայ և ոչ Աբրգինսլին»։

«Ես չը գիտեմ, Մէրի, բայց մեր քարոզիչը կասի քեզ. Դու կարող ես վաղը գնալ նրա մօտ և հարցնել նրանից»։

«Հետեալ առաւօտը կանուխ Մէրին գնաց քարոզչի մօտ և առաջարկեց նրան այդ հարցը, որը շատ մեծ նշանակութիւն ունէր նրա համար։ Քարոզիչը պատասխանեց թէ ոչ մի տեղ կարելի չէ գնել Աստուածաշունչը (Ուէլսի բարբառով, որ մի տարի առաջ հրատարակվել էր) բացի միայն Բալայում քարոզիչ Կարլի մօտ։ Յետոյ նա երկուդ յայտնեց թէ գուցէ արդէն վաճառված են կամ արդէն շատոնց ի վեր խոստացված են Աստուածաշունչի այն բոլոր օրինակները, որ ստացել էր պ. Կարլը Լօնդօնից։

Ուրախալի չէր այդ լուրը և Մէրին տրամած վերադարձաւ տուն, բայց և այնպէս, նա իր յոյսը չը կարեց։ Նա կամենում էր գնալ Բալա որ տեսնէր, թէ արդեօք պ. Կարլը ունէր մի աւելորդ Աստուածաշունչ նրա համար թէ ոչ։

Ճանապարհը շատ հեռու էր. մօտ իննը միջոց պիտի գնար և Մէրին չը գիտէր ճանապարհը։ Նա երբէք չէր տեսել պ. Կարլին, միայն լսել էր թէ մեծ մարդ է,

և մինչև անգամ փոքր ինչ վախե-
նում էր նրա մեծութիւնից: Բայց
բոլոր արգելքները կարող չէին
խախտել նրա հաստատ օրոշումը:
Սկզբում նրա ծնողները յօժար
չէին թոյլ տալ նրան օտարով մե-
նակ գնալ այն երկար ճանապարհ-
հը. բայց վերջապէս զիջեցին նը-
րա աղաչանքին և յօժարվեցին:
Մէկ դրացի կին տուաւ նրան
մէկ պարկ, որ գնէր նրա մէջը և
տուն բերէր նա իր գանձը, թէ
որ կարողանար ստանալ: 1800 թւի
գարնանն էր: Օրը
գեղեցիկ էր երևում: Դեռևս չու-
նացած Մէրին վերկացաւ և ան-
սովոր խնամքով հագնվեց: Միթէ
սա չէր այն մեծ օրը՝ շատ տա-
րիներէից ի վեր սպասված օրը:
Նա դրա իր պարկի մէջ իր գոյգ
կօշիկները խնայելով (կօշիկները՝
նա չէր հագնում այն երկար ճա-
նապարհին, որ չմաշվէին), որպէս
զի հագնէր քաղաքը մտնելիս:
Չնայած որ շատ կանուխ էր՝
ծնողներն էլ վեր էին կացել,
նրանք կամենում էին նախաճա-
շել իրանց աղջկան հետ և յանձ-
նել նրան Աստուծոյ պաշտպա-
նութեանը:

Այդպէս գօրացած և խրախուս-
ված՝ համբուրեց Մէրին իր ծնող-
ներին և ճանապարհ ընկաւ լու-
սածագին: Նրա մերկ ոտները հա-
զիւ թէ դաշտում էին գետնին,
այնպէս թեթեւ էր նրա գնացքը:
Գլուխը բարձր բռնած, փայլուն

աչքերով, առողջութեան թարմ
գոյնը թուի երեսի վրա՝ նա
միշտ առաջ էր գնում սիրուն
դաշտերով, գարնան այդ գեղեցիկ
առաւօտը: Երբէք չըջապատող
առարկաները այդպէս գեղեցիկ
չէին երևացել նրան: Հին սարերը
կարծես թէ հաճութեամբ նայում
էին նրան, արեգակը ժպտում էր
և մի սկիւռ արագ սողալով ծածի
վրա կանգ առաւ մի րոպէ իբր
թէ քաղցրութեամբ կամենում էր
ասել. «Բարեւ, Մէրի» բարի յա-
ջողութիւն»:

Կէսօրի մօտ մեր ճանապարհոր-
դը կանգ առաւ փոքր ինչ բան
ուտելու, որ նրա մայրը դրել էր
պարկի մէջ, և կէս ժամ հանգս-
տանալուց յետոյ նա դարձեալ
շարունակեց գնալ փոշիոտ ճանա-
պարհով: Արեգակը այրում էր,
Բայց աղջիկը ուրախ ուրախ ա-
ռաջ էր գնում, առանց ուշա-
դրութիւն դարձնելու, որ ոտները
վիրաւորվել էին և արեգակը զար-
կում էր գլխին և ինքն էլ շատ
յոգնել էր: Ճանապարհորդութիւ-
նը լաւ անցաւ, նա գնում էր
առանց կանգ առնելու, միայն
մէկ տեղ մի բարի գիւղացի ա-
ռաջարկեց նրան կաթ խմելու:

Երբ հասաւ Բալա, նա ուղղակի
գնաց, ինչպէս նրանց քարոզիչը
խորհուրդ էր տուել, Դաւիթ Էդ-
ուարդսի տունը, որ մի շատ յար-
գելի մեթօդիստ քարոզիչ էր:
Սա ընդունեց նրան շատ սիրով,

հարցրեց նրա երկար ճանապար-
հորդութեան պատճառը և ասաց
նրան որ արդէն ուշ է պ. Կարլին
տեսնելու համար: Հիմա չի կա-
րելի նրա հետ խօսել, որովհետև
նա սովորութիւն ունի կանուխ
քնելու և կանուխ դարթնելու:
Բարի մարդը տեսնելով որ աղջի-
կը մնացել էր շուտաւ թէ ինչ
պիտի անէր, ասաց. «Դու այս
գիշեր կը մնաս այստեղ և վտղը
առաւօտեան հէնց որ ճրագ կը
տեսնենք նրա գրասենեակի պա-
տուհանում՝ միասին կը գնանք
նրա մօտ: Դու բաւական ժամա-
նակ կունենաս քո գործիդ համար
նրա հետ խօսելու և մինչև մթնե-
լը դարձեալ տուն կը հասնես»:

Մէրին ուրախութեամբ ընդու-
նեց այդ առաջարկութիւնը: Հա-
ռարակ ընթրիքից յետոյ տարան
նրան այն խուցը, ուր նա գիշերը
պիտի մնար:—Մի գլուխ Աստուա-
ծաշունչից բերան ասաց, աղօթեց
և մտաւ անկողին յոգնած մար-
մնով և հոգով, բայց համոզված
որ մինչև այստեղ իրան առաջ-
նորդողը պիտի կատարի և իր
սրտի փափագը:

Նա քնեց բոլոր գիշերը առանց
դարթնելու: Լուսածագին բարի
տանտէրը թակեց նրա դուռը.
«Չարթնիր, աղջիկս, պ. Կարլը
արդէն իր գործին կլինի: Վեր
կաց»:

Մէրին դուռն թռաւ անկողնի
միջից և սկսեց աչքերը տրորել:

Արդէն հասել էր վաղուց ի վեր
սպասված րոպէն: Նա հաղնվում
էր, իսկ սիրտը սաստիկ բարա-
խում էր: Նա նստեց մահիճի վրա
և բերան ասաց Սաղմոս ԻԳ. յե-
սոյ մի անգամ էլ կրկնեց. «Տէրն
է իմ հովիւս, ես ոչ մի բանի
պակասութիւն չեմ ունենայ», և
նա համոզված էր որ բռնուն սի-
րով սիրող հովիւր իսկապէս պահ-
պանում էր իրան:

Մէրին պատրաստվեց և Դաւիթ
Էդուարդսի հետ միասին գնաց
այն քարոզչի տունը:
«Ճրագ կայ նրա սենեակում»,
ասած ձերուհի Էդուարդսը: «Մեր
քարոզիչը արդէն գործի է: Նրա
պէս մարդ դժուար կը գտնվի:
Աշխարհքը շատ աւելի լաւ կլինէր
եթէ նրա տեսակի մարդիկ շատ
լինէին»:

Մէրին չը պատասխանեց, բայց
յուզմունքից դողդողում էր, երբ
Էդուարդսը թակում էր քարոզչի
դուռը: Նրա սենեակում լսվեց
քայլերի ձայնը, դուռը բացվեց
և պ. Կարլը յայտնվեց նրանց
առջև:

«Բարի լոյս, Էդուարդս բարե-
կամ: Ինչ գործով էք գալիս այդ-
պէս կանուխ: Ներս եկէք, ներս
եկէք» ասաց նա սրտանց իր
սովորական քաղցր ձայնով, որը
բոլորին սիրելի էր:

Մի քանի խօսքեր երկու քարո-
զիչները իրարու հետ փոխանա-
կելուց յետոյ, պ. Կարլը ներս

հրաւիրեց Մէրիին:

«Մի վախճար, աղջիկս, պատմիր ինձ քո պատմութիւնդ և առաջ տեսնեմ թէ դու ինչ գործով եկել ես այստեղ»:

Մէրին սկզբում փոքր ինչ ամաչում էր, բայց յետոյ սիրտ տուաւ և պատասխանեց քարոզչի բոլոր հարցերին: Նա պատմեց իր ծնողներին, իրանց գիւղին, պատմեց թէ ինչպէս նա իր մանկութիւնից շատ կարօտել է ունենալ մէկ Աստուածաշունչ, թէ ինչպէս երկար տարիներ նա խնայողութիւններ է արել և իր վաստակած կոպէկները ետ դրել մէկ Աստուածաշունչ գնելու համար, և վերջապէս ասաց թէ նա հիմա ունի իր ձեռքում Աստուածաշունչի համար պէտք եղած գումարը:

Պ. Կարլը մի քանի հարցեր արաւ որ տեսնէ թէ որքան աղջիկը տեղեակ է Ս. Գրքին, և նա զարմացած մնաց աղջկայ իմաստուն պատասխանների վրա, տեսաւ որ նա լաւ ուսումնասիրել է իր այդ շատ սիրած գիրքը:

Աղջիկը պատմեց թէ նա ինչպէս շարունակ գնացել էր մօտակայ գիւղի կալուածքը և օգտուելով կալուածատիրոջ և նրա կնոջ քաղցր վերաբերմունքից՝ սովորել էր գոց իր կիրակնօրեայ դասը և Ս. Գրքի շատ մասերը:

Որքան նա պատմում էր, նոյնքան աւելի լաւ պ. Կարլը հոսկա-

նում էր, թէ ինչքան շատ քաջութիւն, համբերութիւն, եռանդ և հաւատք էր պէտք այդքան երկար տարիներ սպասելով անցուցանել և այդքան երկար ճանապարհը ոտքով գալ կարօտած գանձը որոնելու համար:

Բայց միևնույն ժամանակ նրա դէմքը միշտ աւելի լուրջ էր դառնում, և նա վերջապէս դիմելով Էդուարդին ասաց արտած ձայնով. «Իսկապէս ես շատ ցաւում եմ, որ այդ սիրելի երեխան այդպիսի մի ճանապարհորդութիւն է արել Աստուածաշունչը գնելու համար, բայց ես կարող չեմ մէկը տալ նրան»:

«Ուէլսի բարբառով Աստուածաշունչները, որ ես վերջի տարին Լոնդօնից ստացել էի տարածելու համար, արդէն վաղուց բոլորն էլ ծախված են և մի քանիսը, որ մօտս ունիմ, արդէն խոստացված են, և ես չեմ կարող ուրիշին տալ»:

«Եւ զարմանալի է որ ընկերութիւնը, որը մինչև այժմ ուղարկել է Ուէլսի բարբառով Աստուածաշունչը, հիմա հրաժարվում է նորերը տպելու, և ես չը գիտեմ ում դիմել ապագայում այդ գործի համար»:

Մինչ այն Մէրին յոյսով և ապաւինութիւնով լի խոշոր աչքերը սեւեռել էր քարոզչի վրա. բայց երբ լսեց նրա խօսելը Դաւիթ Էդուարդին հետ, նկատեց

նրա տրտում դէմքը և թէև նրա խօսքը չէր հասկացել, բայց գուշակեց թէ նա ինչ պիտի ասած լինէր:

Սենեակը, ուր նա գտնվում էր, յանկարծ մթնեց նրա աչքին. նա նստեց մի աթոռի վրա, ձեռքերով ծածկեց երեսը և սկսեց դառնապէս լալ. — «Ամեն ինչ վերջացաւ», ասաց նա, «ամեն ինչ գուր եղաւ: Վեց տարիների աղօթքները, յոյսերը, սպասելը, խնայողութիւնները՝ ամենը անօգուտ անցան, և սա ճիշդ այն ընկերն էր, երբ կարծում էի թէ պիտի ստանամ իմ շատ կարօտած գանձը»:

«Վերջացաւ, վերջացաւ, ամեն ինչ գուր եղաւ»: Եւ նրա փոքրիկ գլուխը կախվում էր միշտ աւելի ցած և նա չէր կարողանում իր ձեռքերով ետ պահել թուշերի վրայով վաղող արտասուքի կաթիլները:

Մի քանի ընկերներ խեղճ երեխայի ողբի ձայնն էր միայն խանգարում լուրթիւնը, և այդ ողբը շատ շարժեց բարեսիրտ քարոզչին և մի ազդու քարոզ եղաւ նրան: Վերջապէս նա վերկացաւ, մէկ ձեռքը դրաւ աղջկայ խոնարհված գլխի վրա և ասաց նրան դողողուն ձայնով.

«Տեսնում եմ, սիրելի գաւախ, որ դու մէկ Աստուածաշունչ պէտք է ունենաս, թէև ինձ համար շատ դժուար է մէկը տալ քեզ, բայց

այդ բանում քեզ մերժելը բոլորովին անկարելի է»:

Այս խօսքերը ուրիշ ազդեցութիւն ունեցան Մէրիի վրա, որ մինչև անգամ նա խօսել չը կարողացաւ, այլ վեր ուղղեց քարոզչին իր արտասուքով լցված և ուրախութիւնից փայլող աչքերը, որոնցում արտայայտվում էր բարձրագոյն բաղաւորութիւնը և սրտանց շնորհակալութիւնը: Ազնիւ մարդի աչքերը թրջվեցին արտասուքից:

Նա բաց արաւ պահարանը և վերցրեց մէկ Աստուածաշունչ: Նորից ձեռքը դնելով աղջկայ գլխին՝ տուաւ նրան Աստուածաշունչը և ասաց.

«Սիրելի գաւախ, դու որ բաղդաւոր ես ստանալով այդ գիրքը, ես պակաս բաղդաւոր չեմ զգում ինձ, որ կարող եմ տալ քեզ այդ թանգագին գիրքը: Շարունակ կարդա, մտածիր և իրագործիր Աւետարանի վարդապետութիւնը:

Մինչ Մէրին ուրախութեան և շնորհակալութեան արցունքներ էր թափում, պ. Կարլը ասաց ծերունի քարոզչին. «Զէ՛ որ այդ տեսարանը կարող է շարժել նոյնիսկ ամենախստացած սիրտը: Այդ փոքրիկ չքաւոր երեխան, այդքան խելօք, այդքան տեղեակ Ս. Գրքին, ստիպված Լանգֆիհանգլից եկել է Բալա, որպէս զի մէկ Աստուածաշունչ ձեռք բերէ: Այս օրից սկսած ես հանգիստ չը

պիտի տամ ինքս ինձ, մինչև որ մի միջոց գտնեմ լրացնելու իմ երկրի պակասը, որը բարձրաձայն աղաղակում է Աստուծոյ խօսքի համար»:

Մէրին գնաց Դաւիթ Էդուարդ-սի հետ, նախաճաշ արաւ նրանց տանը և իսկոյն ճանապարհ ընկաւ դէպի իրանց տուն: Երկինքը ամպած էր, բայց նա չէր նկատում, որովհետև նրա սրտի մէջ ծագում էր պայծառ արեգակը, և ճանապարհին հանդիպողները զարմանում էին՝ տեսնելով նրան թէ ինչպէս ուրախ ուրախ քայլում էր՝ սխմած իր կուրծքին նեղութիւնով ձեռ բերած Աստուածաշունչը:

Յակոբ Զօնսը և նրա կինը նոյն օրը սպասում էին Մէրին իրիկնահացին: Արդեօք ինչպէս եղաւ, հասաւ նա իր նպատակին, ստացաւ Աստուածաշունչը: Այդպիսի մտածմունքներով անհանգիստ էին լինում ծնողները և ականջ դնում դրսից լսվող ամենափոքր ձայնին անգամ:

Վերջապէս լսվեցաւ թեթեւ ոտնաձայն, դուռը բացվեցաւ և Մէրին ներս մտաւ՝ յոգնած, փոշիոտ և բաղդաւորութիւնից փայլող դէմքով:

Զօնսը ձեռքերը տարածեց իր սիրելի աղջկայ դիմաց և սեղմելով նրան իր սրտին հարցրեց. «Լաւ անցաւ»:

«Լաւ անցաւ», պատասխանեց

Մէրին լի ուրախութիւնով. «Իմ մա ես ունիմ Աստուածաշունչ, փառք լինի Աստուծուն»:

Քիչ չէ պատահում մանաւանդ մանկութեան հասակում, որ շատ մեծ կարօտութիւնով սպասված մի բան, երբ մարդս վերջապէս ստանում է, մի տեսակ անտարբեր է վերաբերվում դէպի նրան, պաղում է: Մէրի Զօնսը այդպէս չէր: Ամեն օր աւելի ևս քաղցրանում էր նրա համար Աստուածաշունչը, որը ձեռ բերելու համար նա այնքան շատ գործել, սպասել, աղօթել և լացել էր: Եւ ոչ միայն նա աշխատում էր միշտ աւելի սովորել, այլ նա իրագործում էր և կատարում նոյնպէս նրա սովորեցրածները: Նրա հոգու մէջ թափանցող սուրբ ճշմարտութիւնները թանգագին սերմի պէս, ընկնելով բարի հողի վրա, բերում էին հասուն պտուղներ, և այդ մատաղ սիրտը միշտ աւելի կատարեալ կերպով նուիրվում էր Տիրոջ և միշտ աւելի հեշտանում էին նրա համար իր կեանքի առօրեայ փոքրիկ պարտականութիւնները, որովհետև նա անում էր բոլորը Տիրոջ համար:

Ինչպէս պատմեցինք, պ. Կարլը շատ շարժվեց այս դէպքով: Մէրի Զօնսի և Աստուածաշունչ ձեռ բերելու համար նրա քաջածնեղութիւնների պատմութիւնը շարունակ շարժում էին նրա հոգին և միշտ զբաղվում էր նա

այն մտքով թէ ինչ անել Ուէլսում բաւական թւով Աստուածաշունչներ տարածելու համար:

1802-ի ձմեռը նա գնաց Լօնդօն և մասնակցեց կրօնական գրքեր տարածող ընկերութեան մէկ ժողովին: Հրաւիրված լինելով մասնաժողովի նիստին՝ նա ջերմ կերպով պատմեց Ուէլսի կարիքների մասին, գանգատեց թէ այնտեղ մեծ պակասութիւն կայ Ս. Գրքի և պատմեց աղջկայ պատմութիւնը:

Լսողները խորին կերպով շարժվեցին և այդ շարժումն աւելի ևս մեծացաւ երբ մասնաժողովի քարտուղարը՝ քարոզիչ Յովսէփ Հիւզսը շատ ոգևորված բացականչեց.

«Պ. Կարլ, անշուշտ պէտք է հիմնել Ս. Գիրքը տարածող մի ընկերութիւն, և եթէ պէտք է հիմնել Ուէլսի համար, ինչու չհիմնել բոլոր աշխարհի համար»:

Այդ փառաւոր միտքը արձագանք գտաւ շատերի սրտի մէջ,

և երկու տարվայ եռանդուն պատրաստութիւնից յետոյ 1804-ի մարտ ամսին հիմնվեց «Բրիտանական Աստուածաշունչի ընկերութիւնը»:

Աստուծոյ զթառատ օգնութիւնից յետոյ շնորհիւ այդ ընկերութեան արած ջանքերի՝ Աստուածաշունչը իսկապէս տարածվել է բոլոր երկիրներում, նոյնիսկ չքաւոր դասակարգի մէջ, և մենք էլ ունինք Աստուածաշունչը մեր մանկութիւնից արդէն: Արդեօք իրաւունք ունինք ապելու որ սա մենք գոնեա մասամբ պարտական ենք Մէրի Զօնսի հաւատքին, աղօթքներին, յարատեւութեանը և քաջութեանը:

Արդեօք մենք էլ նրա պէս սիրում ենք Ս. Գիրքը և փափաքում ենք սովորել և կեանքի մէջ իրագործել:

Տայ Աստուած մեզանից իւրաքանչիւրին, որ այդպէս լինէինք:

Քո խօսքն ապրեցնում է ինձ, Սաղմոս ՃԺԹ, 50:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ԿԱՐԴԱՅՎՈՒՄ ԵՒ ԲԱՅԱՏՐՎՈՒՄ Է

Աղամեանցի տանը Մեծ-Մարտկայա փողոց № 33.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ—Առաւոտեան ժամը 11-ին:

Երեկոյեան ժամը 7-ին:

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐ—

Երեկոյեան ժամը 8-ին:

Մուտքը ազատ է և անվերջ համար:



28285

A. M.
4-134



уфл
звм

ԳԻՆԸ 5 ԿՈՊԵԿ

1

ՀՀ Ազգային գրադարան



NL0181211

Apr

4-134a